

Վ. ՓՈՓՈԶԵԱՆ

ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ

ԵՒ

ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՅ

891.99

Փ-31

Հրատարակութիւն
ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿԸ.
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

5211

4026

13 APR 2011

U

Վ. ՓՈՓԱԶԵԱՆ

891.99

փ-31 սյ

ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ

ԵՒ ԸՆԿԵՂԾ ԸՆԾԸՅ

(ՀՐՈՅՅՆԵՐ)

1001
6244
4499



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մոսկոն վարդապետյանի

1904



28.08.2012

60032



ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ

(Երկիծական գրոյց)

Доз. Цензурою 29 Апрелья, 1904 г., Тифльсь.

Յիսուս էջի վրայ նստած Երուսաղէմ էր իջնում:

Հանդէսը փառաւոր էր, բայց էջը կաղում էր: Պատճառն այն էր, որ խեղճ անասունը բարոտ տեղերից անցնելու ժամանակ մի պայտը կորցրել էր:

Եւ ժողովուրդը պատմում է, թէ Յիսուս բաւական շփոթւած էր, տեսնելով որ իր գրաստը կայթելով ու կաղելով էր գնում, տեղ-տեղ էլ սպառնում էր նրան ցած նետելու:

Բայց յանկարծ, որտեղից որ էր, ժողովրդի միջից դուրս թռաւ մի պայ-

տառ, կանգնեցրեց Յիսուսին, կռացաւ, արագութեամբ բարձրացրեց զըաստի ոտը և մի բանի ըոպէի մէջ այնպէս լաւ պայտեց նրան, որ Քրիստոս ժըպտաց զոհունակութեամբ և ասաց պայտառին.

— Ապա, պայտան, խնդրիր ինչ կամենաս, և ցանկութիւնդ կկատարուի:

Ասում են, որ Յիսուսին աներևոյթապէս ընկերացող հրեշտակներից մէկը կռացաւ պայտառի ականջին և փսփսաց, որ նա երկնային արքայութիւնը մտնել խնդրէր, սակայն մարդը շատ էլ իղէալիստ չէր, բացասական կերպով գլուխը շարժեց և ասաց Քրիստոսին.

— Տէր իմ, ես մի խեղճ պայտառ եմ, որ մի տոպրակ, մի աթոռ ունիմ և տանս կողքին մի ընկուզենի: Յանկանում եմ, որ աթոռիս վրայ եղածը, տոպրակիս մէջ մտածը և ընկուզենուս վրայ իջնողը չկարողանան պոկ գալ— հեռանալ, մինչև որ քո անունով չհրամայեմ նրանց:

Յիսուսը ժպտաց, օրհնեց նրան ու ասաց.

— Թող կատարուի քո ցանկութիւնը:

Եւ անցաւ զնաց:

* *
*

Ապրեց պայտառը երկար տարիներ իր խրճիթի մէջ, իր ընկուզենու սուերի տակ հանգիստ ու առատ: Մենակ էր թէև, ունեցածն էր մի աթոռ, մի խղճուկ տոպրակ և զործիքներ, բայց եկամուտը լաւ էր և նա շատ սիրում էր կեանքը:

Եւ հէնց այդ էր պատճառը, որ մի օր խրճիթի դռանը նստած, երեկոյեան հովը վայելիլիս, երբ տեսաւ հեռւից զէպի իրեն եկող հոգէառ հրեշտակին, սիրտը թունդ ելաւ, սկըսեց զողալ և մտածում էր թէ ինչպէս ազատուի այդ անկոչ հիւրից:

Բայց հրեշտակը մօտ եկաւ, ող-

շունեց, ժպտաց ու ասաց.

—Դէհ, պայտան, բաւական ապրեցիր, այժմ ելիր, վերջին աղօթքդ կատարիր, որովհետև հոգիդ տանելու եմ...

—Օ՛խ իմ հրեշտակ, հառաչեց պայտառը—միթէ այսպէս շուտով հարկ է կեանքը թողնել. ես դեռ ապրել եմ ուզում, նայիր մէկ, ինչպէս լաւ է այս բոլորը՝ բնութիւնն ու հովը, լեռներն ու դաշտերը...

—Այո, խօսք շունեմ, լաւ է, բայց ինչ արած, պայտառ, ճակատագիրդ այդ է, հարկ է հոգիդ տալ:

2է, տեսաւ պայտառը որ ոչ խրնդիրը և ո՛չ էլ բանաստեղծութիւնը՝ օգնեց նրան: Պահ մի տխուր մտածեց, յետոյ մէկէն, մտքի ծայրայեղ լարումի շնորհիւ, մտաբերեց օգտուել Յիսուսի տւած շնորհներից:

—Լաւ ուրեմն, հրեշտակ, ասաց նա քաղաքավարութեամբ — հրամմէ, նստիր քիչ այս աթոռի վրայ, մինչև ես աղօթքս կատարեմ:

Եւ չոգեց աղօթելու: Հրեշտակը, յոգնած էր, նստաւ աթոռի վրայ:

Նստաւ-չնստաւ, զգաց որ բռնուել էր: Ճիգ գործեց ելնելու, թևերը թափահարեց, բայց զարմացած տեսաւ, որ ջանքերն իզուր էին և որ նա լաւ բռնւած էր:

—Այս ինչ է, պայտառ, ի սէր Աստծոյ, գոչեց նա սարսափած—ես մեխւած եմ կարծես, ազատիր ինձ...

—Էհէ, պարոն հրեշտակ, ազատեմ քեզ, ծիծաղեց պայտառը—ինչ արած որ այդպէս եղաւ, ճակատագիրդ այդ էր...

Հրեշտակն ազաչեց, խնդրեց, պազատեց, և վերջ ի վերջոյ, հոգին պայտառին թողնելու գնով ազատեց և սոսկումով շտապեց երկիրը:

Պայտառը ազատւած էր այս առաջին անգամը: Ազատ շունչ առաւ և օրհնեց այն բոպէն, երբ մտածել էր Յիսուսի էշին պայտել:

Մինչ այդ, հոգէառ հրեշտակը ճանապարհին, գունաւորելով, սոսկման թելադրութեան տակ խնդիրը մեծացնելով՝ պատմեց ամէնքին պայտառի արածը, և երկինք հասած, գունաթափ կանգնեց Աստծոյ առաջ:

Աստուած ծիծաղեց, խիստ գլարճացաւ—ասում է ժողովուրդը—բայց իրաւունք չտաւ ոյժ գործադրելու:

—Եթէ կարող էք, ասաց նա—խորամանկութեամբ նրա հոգին առէք, գործ զրէք հնարքներ, բայց երբէք ոյժ:

Եւ այն ժամանակ դժոխքի չար ոգիների մի խումբ, մի խորամանկ խումբ, հրաման խնդրեց պայտառին գնալ և նրա հոգին հանել պայմանով միայն, որ այդ հոգին դժոխք գնար:

—Չատ լաւ, հրամայեց Աստուած—եթէ կարողանաք առանց ոյժի նրա հոգին հանել, թող ձեր բաժինը լինի:

Եւ ահա տեսաւ պայտառը, որ մի խումբ սև, այլանդակ ոգիներ, միմեանց գլխի վրայից ոստնելով, միմեանց ա-

ռաջը կտրելով՝ գալիս էին դէպի իր կողմը:

... —Հօ, հօ... մտածեց նա—այժմ դեերն են գալիս: Յիսուսի պայտառը չլինեմ ես, եթէ հրեշտակին խաբելուց յետոյ, սրանց գլխին էլ մի խաղ չըխաղամ:

Ու կեղծաւոր, խոնարհ, աղերսալից կերպարանք ստանալով՝ շտապեց դիմաւորել սև ոգիներին:

—Այ դու անամօթ, աներես պայտառ, ձայնեց հեռւից խմբապետը—ինչպէս ես համարձակուում հոգիդ ամուր բռնել և հոգէառ հրեշտակին խաբել... Դէհ, այժմ ահա, հրաման է Աստծոյ, որ այդ խորամանկ հոգիդ մեր ձեռքը յանձնես... Տղերք,—դարձաւ նա իր հետևորդներին—հեռու կացէք այդ աթոռից և տեսնենք ինչպէս սա իր հոգին չի տալ...

Այդ ճառից յետոյ սև հոգիները խրճիթ լցւեցին, պայտառին շրջապատեցին, ճիշ ու ազմուկ ականջ խլացրին և հոգին պահանջեցին:

Պայտառը թէև սկզբում շատ վախեցաւ, բայց երբ դեերի ճիշը երկար տեսց, սրտապինդ դարձաւ և գոչեց.

— Փորը ինչ ցած խօսեցէք, պարն դեեր, ականջս խլացաւ... ինչ է ձեր ասածը. հոգիս էք ուզում: Չատ լաւ, խօսք չունեմ. սակայն դուք ինչով կարող էք հաստատել, որ Աստուծոյ էք ուղարկւած և ոչ թէ ինքնագլուխ եկողներ էք:

— Սրան նայեցէք, աղաղակեց մէկը— համարձակում է կասկածել. ուզում է մեզ էլ խաբած լինել:

— Բոլորովին ոչ. ասաց պայտառը — եթէ դուք հաստատէք որ Աստուծ է ձեզ ուղարկել, հրամանեցէք, հոգիս ձեզ տամ:

— Ինչպէս հաստատենք, անմիտ, հարցրեց խմբապետը - գնանք վկայական բերենք թեզ:

— Բայց ոչ, շատ հեշտութեամբ կարող էք հաստատել: Ես մի տոպրակ ունեմ, ահա, տեսէք, եթէ բոլորդ կարողացար այնքան փոքրանալ, որ ա-

ռանց ձեռք, ոտք կամ գլուխ դուրս թողնելու տեղաւորէք նրա մէջ, դա ինձ համար ապացոյց կլինի, որ Աստուծ է ձեզ ուղարկել, ապա թէ ոչ, կորէք դնացէք և Աստուծոյ անունը թող ոչնչացնէ ձեզ...

— Ասաց, ձեռքերը մէջքին դրաւ և հպարտ սպասեց:

— Տղերք, սա տխմար է, ճշաց խմբապետը. ինչ կայ դիւրին մեզ համար, քան փոքրանալը: Մենք չենք միթէ, որ տասնեակներով տեղաւորում ենք մարդկանց սրտի մէջ և ապրում այնտեղ... Դէհ, եկէք այս տխմարին ցոյց տանք մեր ոյժը...

Ու մտաւ տոպրակը: Միւսներն էլ կտեից: Այլևս ոչ մի ձեռք, ոտք կամ գլուխ դուրս չմնաց:

— Հը, տես՞, ձայնեց ներսից խմբապետը:

— Տեսայ, քրքջաց պայտառը, յետոյ մեծ մուրճն առաւ փառաւոր կերպով և սկսեց ջարդատել նրանց կողերը:

Դևերը ճշացին, ճիգ գործեցին զուրս թռնելու տոպրակից, բայց իզնւր. բռնւած էին և լաւ բռնւած:

Աղաչեցին, լացին, հառաչեցին և խնդրեցին. բայց պայտառը այնքան ծեծեց նրանց, մինչև որ թևերը թուլացան:

— Թող մեզ, գոչում էին դևերը — թող գնանք, հոգիդ թող քեզ մնայ, չինք ուզում այդ անիծած հոգիդ, տանենք՝ որ դժոխքը տակնուվրայ անի...

Այն ժամանակ պայտառը յանուն Յիսուսի՝ արձակեց նրանց և դևերը լեզապատառ, ճիշ ու աղմուկով այնպէս շուտով կծիկը դրին, որ պայտառի բրբխն անգամ չսեցին:

Պայտառը ազատւած էր այս երկրորդ անգամն էլ: Ազատ շունչ առաւ և նորից օրհնեց այն բոպէն, երբ մտածել էր Յիսուսի էջին պայտել:

* *
*

Եւ երկար ժամանակ ոչ երկնքի և ոչ էլ դժոխքի պատգամաւորներից մէկը սիրտ չարաւ մի երբորդ փորձ անել և պայտառի հոգին հանել տանել:

Ժողովուրդը պատմում է սակայն, որ բաւական ժամանակից յետոյ, դժոխքի մի ամենախորամանկ գաւակ, լաւ խորհելուց յետոյ, հրաման խնդրեց Աստծուց մի փորձ ևս անել և պայտառի հոգին առնելու գնալ:

Հրամանը ստացաւ. կեղծութեան դիմեց, հրեշտակի կերպարանքի առաւ և իջաւ պայտառի մօտ:

Պայտառը հասկացաւ, որ այս անգամ մի շատ խորամանկ և յանդուգն ոգու հետ գործ ունի, որովհետև եկուորը ոչ աթոռին էր մօտ գնում, ոչ տոպրակին և ոչ էլ խրճիթն էր ուզում մտնել:

— Հոգիդ տուր, կրկնում էր նա և յամառութեամբ մնացել էր դրսումը կանգնած:

Հրաւիրեց նրան պայտառը նստելու, խրճիթ մտնելու. բայց ոգին ժըպ-

տալով գլուխը թոթուկի:

—Ո՛չ, ասաց — ինձ խաբել չես կարող. հողիդ տուր և վերջակէտ գնենք բոլոր խորամանկութիւններիդ:

Պայտառը խորհեց քիչ, յետոյ ցոյց տալով որ այլևս ճար չունի, ջլատուածի և յուսարեկի նման ասաց.

—Էլ ինչ արած, պարոն հրեշտակ, քեզ խաբել չի լինում. հողիս առ տար, բայց թոյլ տուր ինձ մի վերջին անգամ աղօթել. յետոյ, գիտես ես շատ վախկոտ եմ, թոյլ տուր ինձ չողել այս ընկուզենու տակ և եթէ ես վերջին խօսքն էլ կասեմ, ելիր ծառի վրայ և այնտեղից հողիս առ ու տար:

Ու սկսեց այնպէս լալ, հեկեկալ, որ խորամանկ ողին ուրախացաւ թէ յաղթել էր: Ելաւ ընկուզենու վրայ, նստեց ու սպասեց:

Բայց հազիւ թէ նստել էր, զգաց, որ խաբւել էր: Քիչ մնաց ուշքից զնաք՝ որքան աշխատեց պոկ գալ անհնար եղաւ:

Չաղաչեց այլ ևս: Կուսցաւ գէպի

պայտառը և ասաց

—Խաբեցիր ինձ ևս, պայտառ, հողիդ քեզ մնայ թող, միևնոյնն է, դու ինձ ընդմիշտ ոչնչացրիր, որովհետև կեանքումս ես չէի խաբւել այսպէս. թող տուր ինձ գնալ...

—Ահա այդպէս... հպարտացաւ պայտառը—յանուն Յիսուսի գնա և պատմիր ընկերներիդ, որ հեշտ բան չէ Քրիստոսի պայտառի հողին հանելը...

Եւ ելաւ ողին, ու յուսահատ, կաղնի կաղ հեռացաւ: Իսկ պայտառը հըպարտ, ապահով այլևս, սկսեց կեանք վարել և բոլոր հողէառնների վրայ ծիծաղել...

*
*
*

Այտեղ կանգ է առնում ժողովրդի գրոյցը և այստեղ սկսում է գրողի յանդգնութիւնը: Նրան թուում է թէ

զրոյցը լրացած չէ, բանի որ պայտա-
ւը վերջ ի վերջոյ անշուշտ հոգին
տուաւ, մեռաւ:

Բայց ինչպէս, ո՞վ էր ուրեմն հո-
գէտուը, ո՞ր յանդուգնը և ո՞ր խորա-
մանկը, որ արաւ այն, ինչ չէին արել
երկնքի և դժոխքի ոգիները:

Ահա թէ բանը ինչու՞մն էր:

Մի օր պայտաւը մտածեց այլևս
մննակ չմնալ, տուն ու տեղ լինել և
կին ունենալ:

Ու գտաւ այդ կինը. գեղեցիկ,
գրաւիչ, կոկիկ մի կին, որ խրճիթ
մտնելուն պէս, ըստ կանացի սովորու-
թեան, սկսեց ամեն ինչ տակնուվրայ
անել: — Նախ հնացած աթոռը փշրեց
ու վառեց, յետոյ, տոպրակից թոնիրի
սրբիչ կտրտեց շինեց, իսկ քնկուզե-
նին, գտնելով շատ հնացած ու տգեղ,
կտրտեց — ձգեց...

Խեղճ պայտաւն առիւծի լեզի էր
կերել, որ կարողանար դիմադրել կնոջ:

Եւ կինը այնպիսի գրութեան մէջ
զրեց թշւառ պայտաւին, որ սա սրբու-

նեղած, տանջւած, դառնութեան հա-
սած, ինքը խնդրեց Ասածուն՝ իր հո-
գին առնել...

Եւ Աստուած նրա հոգին առաւ:
Իսկական հոգէտուը, այդպիսով, միայն
կինը եղաւ...



ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՅ

Ապրում էր քաղաքում մի հարուստ մեծ մարդ: Այնքան հարուստ, որ նրա համար ոսկին ու արծաթ, զարդ ու դարդարանք անպակաս էին: Բայց նա դրանցից ոչ միայն աղքատի չէր ոչինչ տալիս, այլ ընդհակառակը, ինքը նրանցից կողոպտում էր, գջլում և շատ ընտանիքների թշուառացնում — թողնում:

Եւ մի օր, երբ նա փողոց էր ելել, հանդիպեց սատանային, որ հագել էր մեծ իշխանի պէս: Հարուստը

նրան չճանաչեց, խորը գլուխ տւեց և քաղաքավարութեամբ հարցրեց թէ ով էր նա, ինչո՞ւ էր եկել իրանց քաղաքը:

Իշխանը—և կամ, եթէ կուգէք, սատանան—արհամարհանքով նայեց նրան և ասաց.

—Քեզ ինչ, ինչո՞ւ պատասխանել քեզ:

—Հաճելի է ինձ այդ, ասաց հարուստն. ես այս քաղաքի հարուստն եմ և իսկոյն կարող եմ արգելել քեզ մի քայլ անելու:

—Լաւ, եթէ այդպէս է, իմացիր ուրեմն, որ ես սատանան եմ:

—Հը՛մ... արեց հարուստը— իրա՛ւ... և ինչու ես եկել մեր քաղաքը:

Ու սիրար դող ելաւ:

—Այսօր, ասաց սատանան— ձեր քաղաքում տօնավաճառ կայ. եկել եմ ստանալու այն բոլոր ընծաները, որոնք սրտանց, անկեղծօրէն ինձ կը նւիրեն:

—Չատ լաւ, ասաց հարուստը—
քեզ այդ չեմ արգելիլ, բայց թոյլ տուր
ինձ ընկերանալ և տեսնել թէ որպիսի
անկեղծ ընծաներ են տրուում քեզ:

—Համաձայն եմ, գնանք:

Ու երկուսն էլ մտան վաճառա-
նոց: Հարուստը լցնել տւաւ երկու բա-
ժակ գինի և մէկը տալով սատա-
նային՝

—Վերցրո՛ւ, ասաց — ահա ինչ որ
տալիս եմ քեզ սրտանց, անկեղ-
ծօրէն:

Բայց սատանան չվերցրեց, հաս-
կացաւ որ ծաղր էր այդ և կամ վա-
խից ստիպւած ընծայ:

Այդ միջոցին նրանց մօտով վա-
զում էր մի գիւղացի, աշխատելով բրո-
նել խրտնած և փախչող կովին: Խեղճ
գիւղացին սաստիկ յոգնել էր, շատ էլ
նեղսրտուել վազելուց, ուստի և գո-
չեց.

—Ահա՛ սատանան տանի քեզ, ա-
նիծեալ անասուն:

—Լսեցի՞ր. ասաց հարուստը սա-
տանային—վերցրո՛ւ այդ կովը, քեզ ըն-
ծայեցին:

—Ո՛չ, պատասխանեց սատանան —
ընծան սրտանց չէր: Եթէ այդ կովը
վերցնեմ, շատ ցաւ կը պատճառեմ խեղճ
գիւղացուն:

Փոքր ինչ հեռու նրանք հանդի-
պեցին մի կնոջ, որ աղաղակում էր.

—Սատանան տանի քեզ, հերիք
չէ՛ հարուստինդ...

—Վերցրո՛ւ, ասաց հարուստը սա-
տանային — մանուկը քեզ ընծայե-
ցաւ:

—Ո՛չ, պատասխանեց սատանան
— սրտանց ընծայ չէր: Ու անցաւ:

Հարուստն ու սատանան այդպէս
մտան բազմութեան մէջ:

Այնտեղ, երկու արհեստաւոր կուում
էին միմեանց հետ: Վերջապէս մէկը,
որ սաստիկ զայրացած էր, կանչեց
կատաղութեամբ.

—Կորիք սատանայի հետ, բաւա-
կան չէ՛...

— Վերցրու դրան, սասց հարուստը սատանային — ահա քեզ մի ընծայ:

— Անկեղծ ընծայ չէ, սասց սատանան — այս ըռպէին դա բարկութիւնից կուրացել է, բայց եթէ վերցնեմ ընկերին, առաջին ցաւողը ու զղջացողը հէնց դա կլինի...

Եւ այսպէս երբ նորա մտան տունավաճառ ու դեռ սատանան անկեղծ ընծայ չէր գտնում, յանկարծ մի ծեր, ցնցոտի հագած մի կին կտրեց նրանց առաջը, կանգնեցնելով հարուստին, կատաղաբար նրան նայեց և գոռաց.

— Անիծւես դու, անիծւես, մեր բրտինքով և մեր արիւնով հարստացած վաշխառու... մինչև երբ դիմանանք քեզ. դու յափշտակեցիր իմ վերջին ապաւէն — կովը, դու՛թ չունեցար անօթի թողնելու ամբողջ ընտանիքներ. սատանան թող տանէ քեզ...

Եւ երբ հարուստը պատրաստում էր բարկանալու, սատանան բռնեց նրա կուկրդիցն ու սասց.

— Ահա՛ վերջապէս մի անկեղծ ընծայ, որ տրւում է ինձ սրտանց, խորունկ փափագով և ես ուրախութեամբ ընդունում եմ նրան...

Սասց, կորզեց հարուստին և անհետացաւ նրա հետ...



ՀՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸՏԵՍՆԻ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

ԽԵԼՕՔ ԱՓԱՔԱՂՆԵՐ

ԵՒ

ՈՒՐԻՇ ԶՐՈՅՑՆԵՐ

Գինն է 5 կոպ.

« Ազգային գրադարան



NL0369865

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- | | | |
|-----|---|-------|
| 1. | ԹԱԹԱՒՄԱՆ ԳԻՉԵՐԸ, Լէօի, գինը | 5 կ. |
| 2. | 26 ՏՂԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՋԻԿ, Մակ-
սիմ Գօր'կիյի, թարգ. Մուշէ վ. | 5 կ. |
| 3. | ԽԵՆԹԸ և ուրիշ պատմաժքներ,
վ. Փափազեանի | 10 կ. |
| 4. | ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ, պատմաժք
Ա. Ահարոնեանի | 5 կ. |
| 5. | ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿԸ, է. Օժէշկօի,
թարգ. Չահվերդեանի | 5 կ. |
| 6. | ԱՐՏԻՍՏԸ, Չիրվանդազէի | 15 կ. |
| 7. | ԵՂՕԻ ՔՈՌ ԲԱԽՏԸ, Չահրիարի | 3 կ. |
| 8. | ԷԱՊՕՆԻԱ, Խաչատրեանի | 3 կ. |
| 9. | ԴԱՆԿՕԻ ՄԻՐՏԸ, Մակսիմ Գօր'-
կիյի, թարգ. Ա. Աթայեանի | 3 կ. |
| 10. | ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մակսիմ Գօր'կիյի,
թարգ. Ա. Աթայեանի | 10 կ. |
| 11. | ՄԵԾ ՓԱԿԱՆՔ և ԱԻԻԻԾԻ ՄԱՋԸ
վ. Փափազեանի | 3 կ. |
| 12. | ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆ-
ծԱՅ, վ. Փափազեանի | 4 կ. |